

Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից ձևավորած 2009 թվականի երրորդ եռամսյակի, այդ թվում՝ սեպտեմբեր ամսվա նախադեպի ամփոփում

Ֆինանսական համակարգի հաշտարարը՝ համաձայն «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի, իր մասնագիտական գործունեությունը սկսել է ծավալել 2009 թվականի հունվարի 24-ից: Ստորև ամփոփված է Հաշտարարի կողմից ձևավորած 2009 թվականի երրորդ եռամսյակի նախադեպը:

Հաշտարարի գրասենյակն իր գործունեության երկրորդ եռամսյակում ստացել է ֆինանսական կազմակերպություններին վերաբերող ընդհանուր քանակությամբ 86 բողոք: Ֆինանսական կազմակերպություններին չվերաբերող Գրասենյակի ստացած քաղաքացիների զանգերն ու այցելությունները բազմաթիվ են: Ֆինանսական կազմակերպություններին վերաբերող ութսունվեց բողոքներից քառասունհինգը, համաձայն օրենքի, ենթակա չեն քննության Հաշտարարի կողմից (հաճախորդների մի մասը իրավաբանական անձինք են, մյուսների բողոքները կապված են մինչ Հաշտարարի մասին օրենքն ուժի մեջ մտնելը տեղի ունեցած իրադարձությունների հետ, որոշ պահանջների վերաբերյալ արդեն իսկ առկա է դատարանի որոշում, կամ գործը գտնվում է դատարանի վարույթում, մնացած դեպքերում բողոքները կրում են ընդհանուր բնույթ և ըստ էության չեն պարունակում գույքային պահանջ):

Հաշտարարի քննությանը ենթակա 41 բողոքներից 12-ը երկրորդ եռամսյակում ստացվել են գրավոր տեսքով, որոնցից 2-ի քննությունը դադարեցվել է նոր ի հայտ եկած հանգամանքների հիման վրա: Քննած 10 պահանջներից 1-ի վերաբերյալ կայացվել է պահանջը մերժելու վերաբերյալ որոշում, 5 պահանջները բավարարվել են՝ Հաշտարարի միջամտությամբ հաճախորդին և կազմակերպությանը հաշտեցնելու միջոցով, իսկ մնացած չորս պահանջները դեռևս գտնվում են քննության գործընթացում:

Հաշտարարի քննությանը ենթակա 41 բողոքներից քսանը ներկայացնողները նախապես չէին դիմել ֆինանսական կազմակերպությանը: Նշված քսան բողոքները ներկայացրած հաճախորդները բանավոր դիմել են Հաշտարարի գրասենյակ, որոնց Գրասենյակի աշխատակիցները պարզաբանել են իրենց իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև օգնել են շարադրել կազմակերպությանն ուղղված բողոք-պահանջները: Այդ բողոք-պահանջներում նշվել է, որ հաճախորդը պատրաստվում է դիմել Հաշտարարին: Մրա արդյունքում, 7 բողոք բավարարվել է կազմակերպությունների կողմից՝ առանց Հաշտարարի միջամտության: Ընդհանուր 41 պահանջներից 9-ը (41-20-12=9) չեն քննվել, քանի որ նախնական ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ ֆինանսական կազմակերպության գործողություններն օրինակ են, հաճախորդի՝ որպես սպառողի շահերը չեն ոտնահարվել, և պահանջը ենթակա չէ հատուցման: Առաջնորդվելով օրենքով ամրագրված Հաշտարարի գործունեության հիմնական սկզբունքով, այն է՝ արդյունավետությամբ, հաճախորդները տեղեկացվում են պահանջի հավանական բացասական ելքի վերաբերյալ և իրենք են որոշում՝ հանձնել պահանջը քննության, թե՛ ոչ:

2009թ.-ի երրորդ եռամսյակում ներկայացրած ընդհանուր բողոքների քանակը	86
1. Ենթակա են քննության հաշտարարի կողմից	41
1.1. Ենթակա են քննության հաշտարարի կողմից, սակայն հաճախորդը նախապես չի դիմել ֆինանսական կազմակերպությանը	20
1.1.1 Բավարարվել են կազմակերպության կողմից՝ հաճախորդի ներկայացրած բողոք-պահանջի հիման վրա	7
1.2. Նախնական ուսումնասիրությունից հետո խորհուրդ է տրվել հաճախորդին պահանջը չհանձնել քննության, քանի որ բացակայում էր հաճախորդի՝ որպես սպառողի շահերի ոտնահարման փաստը	9
1.3. Ընդունվել են քննության՝ գրավոր պահանջի ներկայացմամբ	12
1.3.1 Պահանջի քննությունը դադարեցվել է՝ նոր ի հայտ եկած հանգամանքների հիման վրա	2
1.3.2 Պահանջի քննությունը շարունակվել է	10
1.3.2.1 Կապված են ապահովագրական դեպքերի հետ	4
1.3.2.2 Կապված են վարկային գործարքների հետ	4
1.3.2.3 Կապված են գրավատան կողմից գրավի առարկայի իրացման հետ	1
1.3.2.4 Կապված են վճարահաշվարկային գործարքների (բանկոմատով կատարվող քարտային գործարքների և հաշվի սպասարկման) հետ	1

10 պահանջների գծով որոշումների բնույթը՝	
1. Պահանջի քննությունը դադարեցվել է՝ Հաշտարարի միջամտությամբ հաճախորդի և կազմակերպության միջև ձեռքբերած համաձայնության հետևանքով	5
2. Պահանջ մերժվել է	1
3. Պահանջի քննությունը շարունակվում է	4

2009թ.-ի սեպտեմբեր ամսվա ընթացքում ներկայացված պահանջների քանակ	31
1. Ենթակա են քննության հաշտարարի կողմից	20
1.1. Ենթակա են քննության հաշտարարի կողմից, սակայն հաճախորդը նախապես չի դիմել ֆինանսական կազմակերպությանը	11
1.1.1 Բավարարվել են կազմակերպության կողմից՝ հաճախորդի ներկայացրած բողոք-պահանջի հիման վրա	2
1.2. Նախնական ուսումնասիրությունից հետո խորհուրդ է տրվել հաճախորդին պահանջը չհանձնել քննության, քանի որ բացակայում էր հաճախորդի՝ որպես սպառողի	3

շահերի ունահարման փաստը	
1.3. Ընդունվել են քննության՝ գրավոր պահանջի ներկայացմամբ	6
1.3.1 Պահանջի քննությունը դադարեցվել է՝ նոր ի հայտ եկած հանգամանքների հիման վրա	1
1.3.2 Պահանջի քննությունը շարունակվել է	5
1.3.2.1 Կապված են ապահովագրական դեպքերի հետ	4
1.3.2.2 Կապված են վարկային գործարքների հետ	1